Հայտ ներկայացնելու հրավեր
Հայաստանի Հանրապետություն
Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագիր(ՏԻԲԾ)
Դրամաշնորհ N0 P148836AAG-111-G-13-001
Պայմանագրի անվանում՝ Համայնքների տեխնիկական վերազինում բաղկացած տասնմեկ լոտից
Մրցույթի համար՝ UG-07

1. Հայաստանի Հանրապետությունը ստացել է ֆինանսավորում ԱՄՆՄԶԳ-ից Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագրի իրականացման համար և նախատեսում է գումարի մի մասով իրականացնել Համայնքների տեխնիկական վերազինում՝ բաղկացած տասնմեկ լոտից պայմանագիրը: Մրցույթը կընթանա Համաշխարհային Բանկի՝ կանոններով և ընթացակարգերով:
2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը սույնով հրավիրում է իրավասու հայտատուներին ներկայացնել կնքված հայտեր՝
Լոտ 1: 1 աշտարակ մեքենա (Ա)
Լոտ 2: 1 աշտարակ մեքենա (Բ)
Լոտ 3: 1 աղբատար մեքենա (Ա)
Լոտ 4: 4 աղբատար մեքենա (Բ)
Լոտ 5: 1 բազմաֆունկցիոնալ կոմունալ և ձյուն մաքրող մեքենա
Լոտ 6: 1 թրթուրավոր տրակտոր
Լոտ 7: 1 քաղաքային կոմունալ վակուումային փոշեկուլ
Լոտ 8: 2 մարդատար միկրոավտոբուս
Լոտ 9: 2 կոմբայն
Լոտ 10: 2 ինքնաթափ մեքենա
Լոտ 11: 2 բազմաֆունկցիոնալ էքսկավատոր
Առաքման ժամանակահատվածը կազմում է 60 օր:
3. Հայտատուները իրավունք ունեն մասնակցել մեկ կամ ավելի մրցույթներին (լոտեր) ինչպես սահմանված է մրցութային փաստաթղթում: Հայտատուները, որոնց շնորհվել է մեկից ավել պայմանագիր իրավասու են առաջարկել զեղչեր: Այդ զեղչերը պետք է ընդգրգված լինեն մրցութային հայտում:
4. Մրցույթն անցկացվելու է Ազգային մրցակցային գնման ընթացակարգով Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ փոխառությունների և դրամաշնորհների շրջանակներում Ապրանքների, Աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնում» ուղեցույցի համաձայն («Գնումների ուղեցույց» հունվար, 2011թ., փոփոխված 2014թ:), և հայտ կարող են ներկայացնել բոլոր իրավասու հայտատուները, ինչպես սահմանված է Գնումների ուղեցույցում: Պետք է նաև հաշվի առնել 1.6 և 1.7 կետերը, որոնցով սահմանվում են շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային բանկի քաղաքականությունը:
5. Պահանջներին համապատասխանող հետաքրքրված հայտատուները կարող են հետագա տեղեկատվություն ստանալ ստորև նշված հասցեում եւ ուսումնասիրել Մրցութային փաստաթղթերը աշխատանքային ժամերին՝ 10:00ից-13:00 և 14:00ից-17:00 ստորեւ ներկայացվող հասցեով:

6. Պահանջներին համապատասխանող հետաքրքրված հայտատուները հայերեն լեզվով ամբողջ մրցութային փաթեթը կարող են ձեռք բերել ներքոհիշյալ հասցեով գրավոր դիմում ներկայացնելուց հետո: Մրցույթային փաստաթղթերի ամբողջական փաթեթը կարող է անվճար բեռնվել նաև www.gnumner.am (http://gnumner.am/am/category/129/1.html) կայքից: Այնուամենայնիվ, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը պատասխանատու չէ վերոնշյալ կայքից սխալ կամ ոչ ամբողջական բեռնման, ինչպես նաև հետագայում մրցույթային փաստաթղթերի փոփոխությունների առկայության դեպքում դրանց բացթողման համար:

7. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով, մինչև դեկտեմբերիի 26-ը ժամը 12:00: Հայտերը չի թույլատրվում ներկայացնել էլեկտրոնային տարբերակով: Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտերը կբացվեն հրապարակավ հայտատուի կողմից նշանակված ներկայացուցիչների, ինչպես նաև ներկա գտնվող բոլոր ցանկացողների ներկայությամբ, ստորև նշված հասցեով, դեկտեմբերի 26-ին ժամը 12:00-ին:

8. Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն «Հայտի ապահովման հայտարարագրով»: Յուրաքանչյուր լոտի հայտը պետք է ուղեկցվի առանձին Հայտի ապահովման հայտարարագրով:

9. Վերը նշված հասցեներն են՝

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (ՀՏԶՀ), Գնումների վարչություն
Արթուր Սողոմոնյան
Կ. Ուլնեցու 31, Երևան, 405 սենյակ, 0037
Հայաստանի Հանրապետություն
(+374 60)501-560
E-mail: procurement@atdf.am